

2021

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀՈՒՅՍԻ
ԿԱՄՈՒՐՋ

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանել հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ու նրանց ընտանիքների իրավունքներն ու արժանապատվությունը և նպաստել նրանց սոցիալական ներառմանը Հայաստանում:

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԿ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Հաշմանդամություն ունեցող մարդն ապրում է արժանապատիվ կյանքով և բոլորի հետ կառուցում է իր և իր երկրի ապագան:





Սույն հաշվետվությամբ ներկայացվում է 2021 թվականի ընթացքում Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից Երևան քաղաքում և ՀՀ Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք և Կոտայք մարզերում կատարած աշխատանքների ամփոփ նկարագրությունը: Հաշվետու տարվա ընթացքում «Հուլիսի կամուրջը» շարունակեց իր առաքելության իրականացումը՝ նույնիսկ համաճարակի ու պատերազմական իրավիճակների պայմաններում:

2021թվականի ընթացքում հրավիրվել է կազմակերպության մեկ Ընդհանուր ժողով և 6 Խորհրդի նիստ: Կազմակերպության անդամների թիվը մնացել է անփոփոխ՝ 169 անդամ: Կամավորների թիվը կազմել է 120 կամավոր:


2021 թվականի ընթացքում իրականացրած ծրագրերի և ձեռքբերումների համար մենք շնորհակալ ենք մեր բոլորի գործընկեր կազմակերպություններին, հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին ու նրանց ընտանիքներին և մեր ծրագրերի հովանավորներին:

2021 թվականին իրականացրած ծրագրերի հիմնական
ուղղությունները

Կրթության իրավունք

**Անկախ ապրելու և
համայնքում
ներառվելու իրավունք**

**Քաղաքական և
հասարակական
կյանքին
մասնակցության
իրավունք**



**2021 թվականի ընթացքում թիրախավորած տարածքները.
Երևան, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզեր:**

ԾՐԱԳԻՐ 1. «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակ. ՀՀ Տավուշի մարզի 5 քաղաքային և 57 գյուղական բնակավայրերի բոլոր հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սովորող, ինչպես նաև, դեռևս, ուսումնական հաստատություն չհաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մեջ լիարժեք ներառվելու համար՝ ապահովել նրանց կրթության կազմակերպմանն աջակցող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունն ու որակը:

Ծրագրի արդյունքներ.

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից օգտվել են մարզի 80 հանրակրթական դպրոցների և 48 մանկապարտեզների ընդհանուր թվով 488 374 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, շուրջ 773 մանկավարժական աշխատողներ և 447 ծնողներ :



ՀՈՒՅՍԻ
ԿԱՍՈՒՐԶ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021

ԾՐԱԳԻՐ 2. «ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ՝

ԳՈՐԾԸՆԿԵՐ՝



ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ

«ՎՈՐԼԴ ՎԻՇՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ՋԱՐԳԱՑՄԱՆ և ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակ 2. Խոցելի խմբերի և հաշմանդամություն ունեցող երեխաների համար ապահովել ներառական կրթական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունն ու որակը:

Ծրագրի արդյունքներ.

- Շիրակի Մարզի թվով 169 հանրակրթական դպրոցների բոլոր ուսուցչի օգնականները վերապատրաստվել են ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով:
- Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի թվով 229 հանրակրթական դպրոցների շուրջ 840 ուսուցիչներ վերապատրաստվել են ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով:
- Մարզերում կազմակերպվել են հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների և սոցիալական ներառման հարցերով իրազեկության բարձրացման միջոցառումներ, որոնց ընթացքում ձևավորվել են հաշմանդամություն ունեցող երիտասարդների ու երեխաների ծնողների ակտիվ խմբեր:

ԾՐԱԳԻՐ 3. «ԴԵՊԻ ԱՐԴԱՐ և ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՂ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ»

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ՝



«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ» ԴԱՆԻԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ ԵՎ

ԳՈՐԾԸՆԿԵՐ՝



«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐևԵԼՔ»
ԴԱՆԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի տարեկան նպատակ. Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների համար խթանել մատչելի և ներառական կրթություն ստանալու և սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների բարելավմանը:

Ծրագրի արդյունքները.

- Հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի թվով 1583 ուսուցիչների, 1168 սովորողների (որից 584 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ) և 1377 ծնողների (որից 619 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներ) շրջանում իրականացվեց «Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման գործընթացի ներառականության գնահատող հետազոտություն», որի նպատակն էր ուսումնասիրել ուսումնական գործընթացում ընդգրկված բոլոր կողմերի՝ սովորողների, ծնողների, մանկավարժների, դպրոցի վարչական աշխատակիցների և այլ մասնագետների տեսակետերն ու կարծիքը ներառականության բաղադրիչների վերաբերյալ: Հետազոտության արդյունքները հրապարակվել են:
- «Հաշմանդամությունը որպես մարդու իրավունքների հիմնահարց» թեմաներով 58 խորհրդատվություններ և վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել թվով 14 հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, 220 շահառու ընտանիքների անդամների և կրթության ու սոցիալական պաշտպանության ոլորտի 16 հաստատությունների համար:



ՀՈՒՅՍԻ
ԿԱՍՈՒՐԶ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2021

ԾՐԱԳԻՐ 4. «ԼՍԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ՀԱՇՄԱՆ ԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԱՅՆԸ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ»

- **ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ՝**  DMCDD, ԴԱՆԻԱ
ՇՆՈՐՀԱՌՈՒ ԵՎ
ԳՈՐԾԸՆԿԵՐ՝  «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԼԵԼՔ» ԴԱՆԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի տարեկան նպատակ. Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքներն ու ազատությունները երաշխավորված են հաշմանդամությունը որպես մարդու իրավունք ներառած օրենքներով, իրավական ակտերով և զարգացման ծրագրերով:

Ծրագրի տարեկան արդյունքներ

- Կազմակերպվել և իրականացվել են ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի» և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների վերաբերյալ թվով 25 քննարկումներ և սեմինարներ Երևանի և Տավուշ, Շիրակ, Գեղարքունիք և Կոտայք մարզերի շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների համար:
- Մշակվել և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեին է ներկայացվել ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի» իրականացման ստվերային զեկույցը: Զեկույցի մշակմանը մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող 12 հասարակական կազմակերպություններ:
- Երևանում և մարզերում կազմակերպվել են իրազեկման բարձրացման 5 միջոցառումներ, որոնք ուղղված են եղել հաշմանդամությունը ներառող կայուն զարգացման նպատակներին:

ԾՐԱԳԻՐ 5. «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ»

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ՝



«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԴԱՆԻԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՌՈՒ ԵՎ

ԳՈՐԾԸՆԿԵՐ՝



«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՆԵԼՔ» ԴԱՆԻԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ


Ծրագրի տարեկան նպատակ. Զարգացնել և ամրապնդել հաշմանդամություն ունեցող անձանց կարողություններն ու դիմակայունությունը, որպեսզի արտակարգ իրավիճակների ժամանակ նրանք կարողանան կանխել կամ նվազեցնել աղետների ու ռիսկերի ազդեցությունը իրենց կյանքի ու սոցիալական պաշտպանվածության վրա:

Ծրագրի տարեկան արդյունքներ.


- Երևանի և Տավուշի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում հաշմանդամություն ունեցող երիտասարդների և հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ակտիվ խմբերի համար կազմակերպվել և իրականացվել են թվով 18 առցանց և լսարանային դասընթացներ՝ աղետների և ռիսկերի կառավարման համատեքստում հաշմանդամություն ունեցող անձանց դիմակայունության բարձրացման թեմաներով:
- Կազմակերպվել և իրականացվել մեղիա արշավ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում թեմայով, որին մասնակցել են թվով յոթ լրատվամիջոցներ: Մեղիա արշավի ընթացքում ստեղծվել և հրապարակվել են 5 տեսանյութ, 2 տպագիր հոդված և 2 ռադիո նյութ (մուլտիմեդիա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ. 2021թ.

Դրամական միջոցների մուտքեր՝ 199,751,942 ՀՀ դրամ



Ծախսեր՝ 180,663,227 ՀՀ դրամ



2021թ.



0009, ՀՀ, Երևան,
Կորյունի 19ա



+374 10 56 01 43



info@bridgeofhope.am

complains@bridgeofhope.am

bridgeofhope.am

